

127
2-85

1971

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԹԼԿՈՒՐԱՆՑԻՆ

Ե Ի

Ի Ի Ր Տ Ա Ղ Ե Ր Ը

ՏՐԱԳՎԻ Ծ Է 1903

Կ. ԿՈՍՏԱՆԵԱՆՑ

ՄԱՆԳՐԱԿԱՆՆԵՐԸ

ՄԱՍԿԱՆՈՒՄ

ТИФЛИСЬ.

Типография Н. Мартirosiанца, Орбеліановская улица д. № 1-2.

1892 .

Дозволено цензурою, Тифлисъ, 18-го сентября 1892 г.

Յ Ա Ն Կ

1. Յովհաննէս Թլկուրանցի.
 2. «Գէնանց բահար, ալւի բահար»
 3. «Արեւ նման շողշող կըրտաս»
 4. «Ասի սիրէ գիս, ծով աչեր»
 5. «Կոյս երեսացդ է խիստ փափուկ»
 6. «Սիրով մի սպանաներ»
 7. «Ահա եղև պայծառ գորուն» (տաղ գարնան)
 8. «Ես զձեզ տեսայ սիրով նստած»
 9. «Աչերդ է թուխ ու պէտ»
 10. Տաղ վասն արբեցու թեան.
 11. Վասն սուտ սիրելեաց.
 12. Ի վերայ մահուան.
 13. «Է՛ մահ, քանի գթեզ չիշեմ»
 14. «Հանր մեղաց ասեմ չերկինս»
 15. «Թէ մահն չէր ու կամ մեռնիլ»
 16. «Յամենայն մեղաց, ասէ, ի գատ»
 17. Տաղ քաջի Կիպարտին.
-

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԹԼԿՈՒՐԱՆՑԻ

„Ձեռս փտի ի հող դառնայ,
Գիրս յիշատակ առ ձեզ մնայ“:

Վահկայ բերդի փոշիացած փլատակների մէջ
ն գիտէ որ անշուք շիրիմի տակ հանդչում են այսօր
Յովհաննէս Թլկուրանցու նշխարները: Արդէն 367
տարի է, որ նա աւանդել է իւր վերջին շունչը,
սակայն նորա զգացմունքները, նորա բարբառը, նո-
րա գիրը տակաւին կենդանի են, և նա կարծես
այժմ էլ խօսում է մեր սրտի հետ:

Ո՞վ է Յովհաննէսը, որն է նորա ծննդավայրն
ու սննդավայրը, ինչ բազմի դաւակ է նա, ահա՛
հարցեր, որոնց պատասխանը չի երևում մեր պատ-
մութեան էջերում: Մականուլանը նայելով, նա ծը-
նուել է Թլկուրան կամ Թուլղուրան աւանում, որ
գտնւում է Հայոց Միջագետքում Տիարբէքիւր կամ
Աֆիլ քաղաքից դէպի հարաւ. այդ աւանումն ժ.Ֆ.
դարում ապրում էր ատուածատէր իշխանն Առիւծ,
որի խնդրանքով ս. Ներսէս Չնորհալին գրել է իւր
Թղթերից մ'կը: Իսկ թէ այդ աւանն ինչ էր ժ.Ձ.
դարում և ինչքան նշանակութիւն է ունեցել Թլկ-
ուրանցու կեանքի համար, ոչինչ չգիտենք: 1489
թուից մինչև 1525 թիւը Յովհաննէս Թլկուրանցին
կաթուղիկոս էր Սսի աթոռի վերայ. այնտեղ Գրի-

գոր թ. Մուսարէգեանից յետոյ նա հինգերորդ աթո-
ռակալն է եղել Յովհաննէս Բ. անուանով *):

Թլկուրանցու կեանքի և հայեացքների վերայ
փոքր ինչ դադափար կազմել կարելի է նորա երգե-
րով. նոցանից մենք տեղեկանում ենք, որ նա հա-
սած է եղել ծերութեան պատկառելի հասակին. մի
երգի մէջ նա ինքն իրեն յանդիմանում է.

«Եօթանասուն տարին լցեր,

Ի մեղաց մէջն կացեր ես.»

մի այլ երգի մէջ նա, ուղելով բացատրել սիրոյ ազ-
դեցութիւնը և գեղեցիկ կնոջ գործած տպաւորու-
թիւնը, կարծես իրեն ակնարկելով, ասում է, որ
հարիւր տարեկան արեղաներն անգամ, որոնց մո-
րուքի սպիտակութիւնն արդէն սկսում է դեղնել,
չեն կարող դիմանալ գեղեցկութեան ոյժին.

«Հարիւր տարւոյ հաբեղանին,

Որ ճերմակն է դարձեր դեղին,

Կտրէ զկօռտիկ պատարագին,

Ու զքեզ ուզէ առջև խաչին:»

Թէ արդե՞ք Թլկուրանցին, որ եօթանասուն
տարեկան հասակում իրեն յանդիմանում է գրչով,
որքան երկար է ապրել այնուհետև, չենք կարող ո-
րոշել: Նորա կաթուղիկոտութիւնը տևել է 36 տա-

*) Չամչեան, Պատմ. Հայոց Գ. 508. Ալիշանեան,
Սխուան 218, 226, 535 և 539. Նոյն, Յուշիկք հայրենեաց Բ.
125, 510. Սրուան ձտեան ց, Մանանա, Կ. Պոլիս 1876.
Տէվկան ց, Հայերգ, Թիֆլիս 1882.

րի, որ մի պատկառելի ժամանակ է նորա կեանքի մնացորդը դորանով չափելու համար:

Թլկուրանցու հասակի մասին այսքան գաղափար կազմելուց յետոյ՝ հետաքրքիր է իմանալ թէ ո՞վ էր նա մինչև իւր կաթուղիկոսանալը: Մի երկի մէջ նա իրեն անուանում է «Սուրբ Կարապետի ճորտ ու ծառայ»: Աւանդութեամբ հասել է մեզ այն գաղափարը թէ «Մշու սուլթան մուրատաւում» սուրբ Կարապետը հաւատով իրեն ապաւինողներին, իրեն ուխտաւորներին, պարգևում է զանազան ձիրքեր, ինչպէս են նուագելը, երգելը, լարի վերայ խաղալը և այլն: Նոքա, որոնք իրենց եօթնամեայ պահեցողութիւնից և իրենց ուխտը սրբութեամբ կատարելուց յետոյ հասնում են իրենց բաղձանքին, իրենց համարում են ծառայ և ճորտ ս. Կարապետի. դոքա են զանազան աշուղները, ըմբշամարտները, լարախաղացները և այլն: Արդե՞ք Յովհաննէս Թլկուրանցին այդ իմաստով է խօսում իւր մասին, թէ նա նուիրուած է եղել Ս. Կարապետի անունը կրող մի վանքի, չենք կարող որոշել: Սակայն նորա երգերի մեծ մասի ներքին բովանդակութիւնից կարելի է մակարբերել, որ նա առաջին իմաստով է իրեն անուանել «ծառայ և ճորտ ս. Կարապետի»: Նորա երգերի մի մասի մէջ երևում է երիտասարդական խանդ, մեծ ոգևորութիւն աշխարհիս վայելքների վերայ: Երգերի միւս մասի մէջ երևում է ծեր նրատաճ մարդու խրատող բնաւորութիւնը. նոցա մէջ

Թլկուրանցին զգուշացնում է մեզ աշխարհիս հրապոյրներէց, յիշեցնում է մեզքի ազդեցութիւնը, սարսափեցնում է մահի և յաւիտենական պատիժների դաղափարով: Եթէ նորա երգերի այս երկու տարբեր յատկութիւնների մէջ որոնելու լինինք մի կապ, մենք կը տեսնենք, որ նոքա բնական ծնունդ են այն վիճակի, որի մէջ անցել է Թլկուրանցու կեանքը: Երիտասարդական կեանքի յիշատակները պատկերացած են նորա առաջին երգերում, որոնք երևինա հէնց աշխարհական վիճակի մէջ է յօրինել: Այն ինչ նորա երգերի երկրորդ խումբը ծնունդ է նորա մենաւոր կեանքի, երբ զղջումն ու ապաշաւանքը մի կողմից, եկեղեցական կոչման ծանր պարտիքը միւս կողմից յառաջ են բերել նորա մէջ ձգտումն խրատելու ուրիշներին և զգուշացնելու մեզքի վտանգներից: Երկու խմբերի մէջ այսպիսի մի յաջորդականութիւն ենթադրելով, մենք կարող ենք հասկանալ և այն խիստ տարբերութիւնը, որ երևում է Թլկուրանցու երգերի առանց այն էլ անպաճույճ բարբառի մէջ: Առաջին խմբի բարբառն իսկապէս կորով է ներշնչում, պարզ է և կենդանի. կարելի է ասել, այդ բարբառն իրեն օտեղծող երիտասարդի նման աշխույժ ունի, կրակոտ է: Մինչդեռ երկրորդ խմբի երգերի բարբառը մշակուած է ժամանակի արուեստի չափով, սահուն է և մասամբ շինծու: Այս տարբերութիւնը նշմարելուց յետոյ կարելի է մինչև անգամ ասել, որ Թլկուրանցին երիտասարդ հասակում, աշ-

խարհական ժամանակ, եղել է աշուղ, եթէ ոչ արհեստով, գէթ իւր կոչմամբ: Թէ արդարեւ նա երգել է ինչպէս մի արևելեան աշուղ, այդ երևում է նորահրդերի արտաքին ձևից ու խօսքերից, որոնք նման են արևելեան աշուղների ընդունած ձևերին: Նա գարծ է գրել բազմաթիւ թուրքերէն և պարսկերէն բառեր և դարձուածներ *): Մեր ձեռքի տակ գրտնուած մի գրչեայ տաղարանի մէջ, որ դրուած է 1695 թուին, կան տաղեր, որոնք ամբողջապէս թուրքերէն են յօրինուած. նոցանից մէկի վերնագիրն է «տաղ ֆրիստոսի ասացեալ այլազգի լեղուաւ.» սիզրի խօսքերն են «Քիմ սէյ պէնի պիլմէղենտի.» ընդ ամէնը 10 տուն է, վերջինը միայն հայերէն է, որ է այսպէս.

«Ես Յովհաննէս Թլկուրանցի
 Զայս բանս ասի ի վերայ Փրկչի,
 Եկն կամաւ ի վերայ խաչին
 Խ' ազատեաց, Է' ազատեաց,
 Խ' ազատեաց զհոգիան
 Ի բանտէն, ի բանտէն, ի բանտէն,
 Ճանր՛մ, զհոգիան ի բանտէն:»

Միւս տաղը, որի վերնագիրն է «տաղ Յովհաննէս Թլկուրանցույ ասացեալ է», յօրինուած է հայերէն և

*) «Ք է ն ա յ բ ա հ ա ր, ա յ ի բ ա հ ա ր» «բ ո լ ո ր լ ու ս ի ն շ ա մ ս ու ղ ա մ ար» «որ է ստեղծուած ն ա խ շ ու ն ի փ ա ր» «պտուղ կուտաս մ ու շ կ ու ա մ պ ա ր.» «իջնունք ի բ ա ղ չ ե ն ի» «բ է բ ու լ ի ն ա ն է ն ք ն ա դ ա ր» «Լ ու թ Ֆ ու ք ա ր ա մ ով» «խուճար ու մէստան» և ուրիշ:

Թուրքերէն՝ իւրաքանչիւրը մի մի երկտող՝ ընդ ամէնն 9 տուն. սկզբի տողն է «Արարիչ արարածոց գասուց:» Այս ամէնից հետևում է, որ Թլկուրանցին քաջ գիտէր Թուրքերէն, ծանօթ էր Պարսկերէնին, վարժ էր Թուրք և Պարսիկ և առհասարակ արևելեան երգիչներին յատուկ ձևերի մէջ և հմուտ էր նաև արևելեան եղանակներին: Թուրքերէնի և Պարսկերէնի գործածութեան նկատմամբ Թլկուրանցին հետևել է իրեն ժամանակի սովորութեանը, երբ Հայոց երգիչների մեծ մասը շատ կամ սակաւ չափով փայլեցնում են իրենց հանճարը յիշեալ լեզուներով, թերևս քաղաքական և ընկերական կեանքի ներքին պայմաններից թելադրուած: Այսպէս են՝ Առաքել Բաղիշեցի, Գրիգոր Աղթամարցի, Յակոբ, Ղազար, Մկրտիչ Նաղաշ, Կոստանդին Երզնկացի և այլ շատերը, որոնց առանձին առանձին ուսումնասիրութիւնը, եթէ մեզ մի օր չաջողի հրատարակել, աւելի լաւ կը պարզէ նոցա ժամանակի ոգին:

Յովհաննէս Թլկուրանցու երգերի բովանդակութեանը նայելով, կարող ենք ասել, որ դարնան օրերը, բնութեան վայելչութիւնները, սէրը, կնոջ դեղեցկութիւնը, աշխարհային գուարճութիւններն սկզբում մեծապէս ոգևորել են նորան: Նա հիանում է, երբ ձմռան կապանքների արձակուելուց յետոյ բացւում են գարնանային օրերը, գեղեցիկ զարդարւում է բնութիւնը, կեանք են առնում բոլոր շնչաւորները, աշխարհը լիանում է նոր նորոգուած կեանքի քաղց-

րուժիւններով. ձմեռնային գերութեանը յաջորդում է լիակատար ազատութիւն, որ շունչ է տալիս չափշտակուած երգչին և հրապուրում է նորան գէպի այգիքն ու պարտէզները.

«Ահա եղև պայծառ դարուն.

Ծաղկեալ այգիքն ու պաղջանին,

Քունդքն ծաղկին ու հետ կապին,

Անուշանայ հովն ու քամին,

Չաղերն ձայն ածե՛ն յայգին,

Քաղցր կուգայ ձայն պիւլպիւլին.

Կուժանձրանայ շուքն ծառին,

Յորդոր գնայ ջուրն ի յառջին...»

Նորաբաց դարնան այս հաճույքները զարթեցնում են Թլկուրանցու մէջ սիրոյ զգացմունք. նա ուրախացած բացագանչում է «Գէնայ բահար, այլ՛ էի բահար

Այլ՛ էի կուտան սիրոյ խարար...»

դարձեալ դարուն, դարձեալ հասաւ սիրոյ պատգամ կրակոտ երգչին. նա քաջ գիտէ այդ սիրոյ զօրութիւնը.

«Սէրն կուտանի դամօթն չերեսէն

Ի հաբեղայէն, ի վարդապետէն

Երէց, սարկաւազ կուձգէ կարդէն...»

Նա քաջ գիտէ, որ սէրը փոխում է կրօնաւորներին, կարգից հեռացնում է կարգաւորներին, շփոթում է միանգամայն և նոցա տրամադրութիւնը.

«Մարդ որ սիրոյ կուհանդիպի,

Նա քան զկրակ կուլինի վառ.

Այլ ոչ աղօթք ի միտ կուգայ,

Ոչ Յայսմաւուր կարգայ ու ճառ:»

Իսկ ո՞վ կարող է սիրել առանց փոխադարձ սէր զը-
գալու: Թլկուրանցին սիրում է ջերմ սիրով մի չքնաղ
պատկեր, որի գովասանքն անելիս նա չի գտնում
բաւական խօսքեր. նա դրուատում է «ծով ծով ա-
չեր» «կեռ կամարակապ ունքեր» «լուս սպիտակ ճա-
կատ» «լար լուսեղէն շրթունքներ» «մարգարտաշար
ատամներ» «շողման կլափ» «ոսկէթել վարսեր» «ճո-
ճան շողկտակ վիզ» «շաքար բերան» «անուշ ձայն»
և «նազելի հասակ:» Ահա նորա ներկայացուցած գե-
ղեցկութեան օրինակը.

«Ծով ծով աչեր ու լուսքնար

Ունքն կեռ էր քան դկամար.

Ճակատդ է լուս ու լուսքնար

Բոլոր լուսին շամս ու դամար

Վարսերդ ոսկի թելէ քաշած

Վերայ մարմնոյդ եկեալ հաւասար.

Ծոցդ է բաղչայ վարդով ի լի

Մարգըրիտ ատմունքդ ի շարէշար.

Մարմինդ քո ճոխ բուսեր չինար,

Ու ճօշկուտայ քան գուռ դալար.»

Չառ հին է Թլկուրանցու նուագած այս ներդաշնակ
մեղեդին: Գեռ փ. դարում Գրիգոր Նարեկացին նույն
կերպ է դրուատում գեղեցկութիւնը, երբ գովում է մի
այսպիսի չքնաղ պատկեր.

«Աչքն ծով ի ծով ծիծաղախիտ

Պաւալանայր յառաւօտուն
Երկու փայլակնաձև արեգական նման.
Յունից նրբենից ի մի կից կամար...
Վարսիցն երամից զարդ ոլորս են առեալ...
Յայտէն նունենի դեղաշիտակ ծաղկանց...
Բերանն երկթերթի,
Վարդն ի շրթանց կաթէր...»

Հայոց արդի ժողովրդական երգերն էլ նոյն սլափ-
կերներով են հռչակում Հայ կնոջ գեղեցկութիւնը.
այդ ցոյց է տալիս թէ Յովհաննէս Թլկուրանցին
հաւատարիմ է մնացել ժողովրդական հարազատ ար-
տայստութեանը: Նա պէտքէս ձևերով, որ սովորա-
կան են աշուղներին, յայտնում է իւր հիացումը իւր
գոված առարկայի վերայ, որի նմանը չի գտնում
աշխարհիս երեսին.

«Գուն օրինակ ես աղէկնուն
Այլ մայր չէր բերեր քան զքեզ
Սիւստակ ճակատ, թուխ թուխ աչեր,
Էութֆ ու քարամով լուս երես,
Լար շրթն եր ո վ դ վարդ կու թ ա ի ե ս,
Ճօճան վզովդ բերդեր քակես,
Ամէն անձամբ գեղեցիկ ես
Քեզ նմանակ միայն դու ես...»

Այս կատարեալ գեղեցկութեան մէջ տեսնում է եր-
գիչն ամենայն լիութիւն կեանքի և բարիքների. նա
խոստովանում է որ իւր սիրած առարկան մէնակ

կարող է ընձեռել նորան այն ամէնն, ինչ որ չի կարող տալ նորան ողջ աշխարհը.

«Երեսդ է արև, ճակատդ է զոհրա,
Կլափդ է խնձոր, ծծերդ է շամամ,
Ձինչ դրախտն է Եդեմ, ամէն ծոցդ քո կան,
Երբ շաքարն է մօտ, ի Մըսըր ինձ ինչ կայ.

Սիրով մի սպանաներ
ձէլլէտ էֆէնտի:»

Երգիչն իւր սիրականի մի համբոյրի համար կուտար ամբողջ խորասանը, հապէշատանը, Արաբիան, Հընդկաստանը. իսկ նորա մի գոյգ վարսերի համար կը զոհեր Չինաստանը, Բոլղարիան, Ստամբուլը. առարկանէր, որոնք այն ժամանակի ամէնաթանգագին գանձերն էին և բանաստեղծների համար դրուատելի: Առհասարակ գովելով գեղեցիկ սեռի ազդեցութիւնը, Թլկուրանցին մերթ խոնարհում է նորա զօրութեան առաջ, ասելով որ դուք հալէք հանէք լերունք

Սիրով քակէք բարձր բերդունք

Ի ՚ի գիլ հանէք վէմք ու սարունք.»

մերթ խոստովանում է, որ կանայք քահանաների համար «ականակուռ զարդ են», արեղաների համար «որոգայթ» են, վարդապետը որ նոցա տեսնի «մոռնայ զուսումն ու շատ գրունք». և միանգամայն զարմանում է երգիչը, թէ ինչպէս կարող են մեռնել կամ ծերանալ նոքա, որոնք սիրում են մի գեղեցիկ կին.

Ով զքեզ սիրէ, ո՞նց մեռանի,
Կամ երեսուին դառնայ դեղին.»

Այսպէս ուրեմն Յովհաննէս Թլկուրանցին ապրում
և մտածում է ինչպէս աշխարհի մարդ. նա ոչ միայն
չի խորշում կեանքից և չի խորշեցնում, այլ և սի-
րում է: Նա գնահատում է կնոջ սէրն ու գեղեցկու-
թիւնը, ճանաչում է և նորա պակասութիւնը. ահա
թէ ինչպէս է ներկայացնում նա կնոջ ազդեցութեան
վատ կողմը.

«Կինն քաղցրիկ զրուց ունի,
Խալթաւ ի հետ առնէ գալար,
Յանկարծ զթիւնքն ի մարդ թափէ,
Որպէս զակնատ բռնէ անձար,
Յունքն քաղէ, զաչքն դեղէ,
Միշտ զպառունկն ծումուէ» և այլն:

Այս խօսքերից երևում է, որ Թլկուրանցու երիտա-
սարդութիւնը բնաւ այն համեստ ու սահմանափակ
բնաւորութիւնը չէ ունեցել, որ չատուկ էր նորա
եկեղեցական կոչմանը. ի հարկէ այդպիսի մերձաւոր
ծանօթութիւնը գեղեցիկ տեւին կարող է լինել հե-
տեւանք նորա բնտանեկան կեանքին աշխարհական
կոչման մէջ և հաւանական է, որ Թլկուրանցին
մինչև իւր կաթողիկոսանալն եղել է շուշտակ կրօ-
նաւոր: Այս երևում է և նորա միւս երգերից, որոնց
մէջ նա պատկերացնում է սիրոյ և կնոջ վտանգա-
ւոր կողմերը և զգուշացնում է մեզ: Երիտասարդու-
թեան ժամանակ կեանքի և վայելչութիւնների սի-

րահար Յովհ. Թլկուրանցին ծերութեան օրերում
զգուշացնում է մեզ գինու չափազանց զործածու-
թեան հետևանքներից. նա խորհուրդ է տալիս հա-
ցից լետոյ երկու երեք բաժակ միայն վալելել.

«Քան զգինին լետև հացին

Երկու երեք՝ այլն անշահ է.»

նա ասում է, որ «գինին է մայր ամեն մեղաց» «գի-
նին է օգնական շնութեան» «գինին սպանումն
զրդու է.»

«Գինին մարդոյ ամօթ բերէ

Եւ ի լեզու չար արկանէ.»

Նկարագրում է հարրած մարդու զգուելի գրութիւնը
և խրատում է հեռու մնայ գինուց. արբեցութեան
վատ ախտի հետևանքն է համարում մարդկանց
մոլութիւնն օտար կանայք սիրելու, որոնց վատ ազ-
դեցութիւնը մարդու բարոյական վիճակի վերայ
պատկերացնում է զանազան օրինակներով. նա աս-
ում է, որ Ադամին «հալալ կինն» էլ վնասակար
եղաւ. ինչ շահ ուրեմն օտար կնոջից.

«Օտարն չէ առողջ մարմին, այլ խոց և քոս,

Ար յաւիտեան չառողջանայ մեղացն բորբոս.»

Ընտանեկան սրբութեան մէջ թոյն թափող այդ ա-
պականացու չարիքը, որ շատ դարերում շատ ազ-
գերի բարեկեցութեանը հիմնաւոր կերպով սպառնա-
լիք է եղել, անշուշտ ՓՆ. դարում Ալլիկիայի հայոց
մէջ ևս տարածուած է եղել շնորհիւ այն ապակա-
նութեան, որ ընդհանրապէս մտած էր մահմեդա-

կանութեան և օտարոտի ցեղերի տիրապետութեան
ժամանակ. այդ ապականութիւնը պատկերացնում են
ինչպէս յիշատակագրութիւնները նմանապէս և վար-
դապետական բազմաթիւ խրատները, որոնք գրուած
են կնամոլութեան և շնութեան դէմ. բնական է
ուրեմն Յովհ. Թլկուրանցու նախանձախնդրութեան
խստութիւնը, որի ազգու յայտարարն է նորա տա-
րակուսանքն ու անկեղծ զղջումը.

«Ես դքեզ տեսայ նման լուսոյ
Զէտ արեգակն որ նոր ելնու.
Սիրտս այրեցաւ բարկ կրակով
Ես մնացի խւ կապելու:

Ես իմ սրտիս դանակ ածեմ,
Զաչքս ճաղի տամ հանելու.
Աստէնս չէնէ խիստ ամօթով,
Անդէն բաժին կեր գեհենու:

Բայց չէ շահեր մարդն ի սիրոյ,
Ոչ փառքն առեր ի վաստուծոյ,
Աստէնս կէնէ զմարդն ամօթով
Անդէն բաժին կեր գեհենոյ:»

Թլկուրանցու միւս բարոյական խրատները վե-
րաբերում են մարդկային ընկերութեան մէջ տեղի
ունեցած զանազան չարիքներին. նա յանդիմանում
է իւր ժամանակի մարդկանց կեղծաւորութիւնը,
որ երգչին շատ է վրդովել.

«Այս ժամանակս հանց ելիք,
Ով որ չգիտէ, թող գիտենայ.

Զով որ դիտես խիստ սիրելի,

Հուրն ի բերնէն ի դուրս կուգայ:»

Խրատում է հեռու մնալ մեղքերից, աստուածային օրէնքներին միշտ մօտ լինել, վշտի ժամանակ ուրախանալ, աղքատութեան ժամանակ փառք տալ Աստծուն, զգուշանալ լեզուազարութիւնից. «Զրարան և հերձուածող բանիւ մի լինիր, ստախօսն և երդմնազանցն մի ընդունիր, ստութիւնն սլարոնին անվայելուչ է» ասում է Թլկուրանցին և յիշեցնում է որ երեք բան կայ, որ հաւասարապէս ասում են Աստուած և մարդ:

«Զհարուստ մարդն ստախօս, զաղքատն հպարտ,

Զայլևոր ծերն սլուռնիկ և որ սիրէ զարդ:»

Ապա պատկերացնում է աշխարհային կեանքի վախճանը. մահուան գաղափարը յառաջացնում է նորամէջ գիտակցութիւն աշխարհիս ունայնութեան մասին. շատ սրտառուչ է կեանքի բազմափոփոխ հաճոյքները վայելած երգչի ձայնը, որի մէջ երևում է խորին զգացմունք և պարզ ու ազդու արտայայտութիւն. աշխարհային երջանկութեան խաղալիկները տեսէք թէ ինչպէս են պատկերանում մահու թաղաւորութեան մէջ. թոյլ տանք, որ Թլկուրանցին ինքը խօսի այդ մասին.

«Ով որ ունի բերդ ու քաղաք,

Գարպաս ունի ոսկւով ծեփած,

Յետոյ եթող դաժէնն անտէր,

Ներքև հողուն է նա պառկած:

Ով որ խմէր զանուշ զինին,
Ջինքն բտէր քան զխոզ ուռած,
Տեսայ զնա խիստ ատելի
Չանուշահոտ դէշ մի դարձած:

Ով որ հեծնուր ձի բարձրավիզ,
Ու թուր քաշէր ամէն դիհաց,
Տեսայ զնա խիստ փոշիման
Երկու փայտի մէջ էր պառկած:

Վատ աղջկունք, կին գեղեցիկ,
Որ ծամն ու վարսն են յօրինած,
Նոքա ունին պայծառ հանդերձ,
Ջէտ արեգակն են բոլորած,
Ճօճեն ւ՛րոր առնեն կամաց,
Լինին ամէն մարդոյ սիրած,
Ի մահու օրն են ատելի,
Գէշ ու զազիր են տեսողաց:»

Այսպէս մահուան ապականութիւնը տիրում է առհասարակ ամէնքին առանց խնայելու. Թլկուրանցին չիշում է մինչև անգամ հայր Աբրահամին, Իսահակին, Մովսէսին, Սողոմոն իմաստունին, որոնք չեն կարողացել ճողովրիչ մահի ճանկերից. նա տիրել է մինչև անգամ Տրդատ թագաւորին և Առատանդիանոս կայսերը. մարդս որքան էլ որ զօրաւոր լինի, ասում է Թլկուրանցին, մահը դարձեալ յաղթում է նորան և դնում է մի քարի տակ.

«Թէ կանգնէր հազար հեծել

Եւ ժողովք, իսկի չամաչես.

Թէ հազեր է վեց զրեհ,
Նետ նետես լ'ի թափ անցրնես,
Տանիս զնա ի բանտ ածես,
Քէմ դնես, քար մի ձգես...» այսպէս է յանդի-
մանում Թլկուրանցին մահին, որի ամենակարողու-
թիւնը պատկերացնում է արծուի օրինակով.

Արծիւ ես յերակ թռչիս,
Լայնաձիգ զթևդ տարածես,
Ջինջ յաշխարհս հզօր մանուկ,
Ի թևիդ ծայրն ծրարես:»

Յովհաննէս Թլկուրանցու երգերի մէջ մի նշա-
նուաւոր տեղ է բռնում նորա տաղը քաջ Լիպարիտի
վերայ: Արիւկիայի Հայոց թագաւորութեան վերջին
զօրավարներից մէկն է քաջ Լիպարիտը, որ աւագ
մարաջախտ Թորոսի որդին էր և կրտսեր մարաջախտ
Վասիլի եղբայրը: Կոստանդին Գ. թագաւորի ժա-
մանակ Ռուբինեան հարստութեան վերջին շունչն
արդէն մօտեցել էր: Տարսոնի ամիրան Մանչակը (6)
հազար թուրքերով 1368 թուին յարձակուեցաւ Սիս
մայրաքաղաքի վերայ. Կոստանդին Գ. նորա դէմն
ուղարկեց քաջ Լիպարիտ զօրավարին, որ յաղթեց
և հալածեց թշնամուն և գերի բռնեց Մանչակի
«Գոված տղան:» Վիրաւորուած թշնամին 1370
թուին նորոգեց իւր արշաւանքը Սսի վերայ: Այդ
անգամն էլ քաջ Լիպարիտն ելաւ՝ նորա առաջը
կտրելու: Սակայն շատ սրտաշարժ էր այս նուագի

տեսարանը. Լիպարիտ լաւ սպառազինուելուց յետոյ
հանդէս եկաւ մատուցանելու իւր վերջին հրաժեշտը.

«Երկրպագեաց սուրբ աթոռոյն,

Եւ ծունր եղեր ամէն խորան.»

մնա՞ ըստ՝ արաւ իւրայիններին. այնպէս հառաչեց
ու համբուրեց իւր սիրական որդուն Յովհաննէսին, որ
ամբողջ բանակը լաց եղաւ. ողջունեց եղբօրը, կնոջը.

«Ասաց. Արդե՛ակ իմ Յովհաննէս,

Վասի՛լ եղբայր իմ սիրական,

Փառաց տիկին դու Մանանայ

Իշխանուհի արեւման,

Հայե՛աց պատկերս ի մանկութեան,

Ար տի մտնիմ ի հող տապան.»

Այսպէս իւր մահն աչքն առած՝ Լիպարիտը ձայն
տուեց թագաւորին.

«Հայոց թագաւոր ազնուական

Հաստատ ու ամուր պահէ՛ զկարմունջն,

Ար ես մտնում ի մէջն ու գամ.»

Քաջ Լիպարիտը մտաւ թշնամու բանակը, Սիւր
պաշտպանող կամուրջի պահպանութիւնն յանձնելով
թագաւորին: Քաջաբար խիզախելով թշնամու վերայ,
Լիպարիտ այնպիսի կոտորած արաւ, որ «արիւն գե-
տեր ելան.» բաց իգնւր. թշնամին կարողացաւ առ-
նել կամուրջը, որ կոստանդին Ք. անգոր էր գտնուել
պաշտպանելու: Եւ երբ քաջն Լիպարիտ վերադառ-
նում էր Սիւս, անակնունելի էր հանդիպումը թուր-
քերի գնդերին, որոնք

«Ռուժք դրին ամեն դիհաց
Չատ խոցեցին զյաղթող վկայն,
Հայէր ողորմ յաջ և ի ձախ
Ջոչ ոք գտաւ իւր օգնական.»

Այնտեղ այդ անթիւ գնդակների կարկտանման տեղացող հարուածների տակ մնաց քաջ ախոյեանը. թշնամիք կտրեցին նորա գլուխը և տարան իրենց հետ, թողնելով կամուրջի վերայ նորա մարմինը: Նորա հետ սպանուեցաւ և Սիր Յոհանը. որդին է արդեօք Լիպարիտի, թէ ուրիշ անձանօթ ոք, յայտնի չէ: Ինչպէս ասում է Թլկուրանցին, քաջ Լիպարիտն իւր անձնագոհութեամբ անմոռանալի մնաց Հայոց մէջ, որոնք

«Յորտեղ նստին հաց ու սեղան
Ժողովք բազում և շատ իշխան,
Յիշեն զնա սուրբ քահանայք,
Տան ողորմի, ասեն նմա:»

Այստեղ կնիք գնելով մեր խօսքին, ընթերցողին ենք թողնում մեր առաջարկած բնագրից իմաստասիրելի Յովհաննէս Թլկուրանցու տաղերի այլ յատկութիւնները:

Այժմ մի քանի խօսք առաջիկայ հրատարակութեան մասին: Մենք տալիս ենք ընդամէնը տասնևվեց երգ. նոցանից ութը մենք հանել ենք ձեռագիր օրինակներից, որոնց թուականները լուսանցքներում նշանակել ենք. երեքը նոցանից, որքան մեզ յայտնի է, առաջին անգամ են լույս տես-

նում, իսկ միւս հինգը, թէև հրատարակուած էին, քայց անյայտ է թէ որ ժամանակի ձեռագրերից են հանած. այդ հինգը մենք համեմատեցինք արդէն հրատարակուածների հետ և տարբերութիւնները լուսանցքներում ցոյց տուինք: Միւս ութն երգերի հրատարակութիւնը եղել է Բաղմավէպի, Մանանայի, Հայերգի և Սիսուանի մէջ: Արոնք որ մի քանի տեղ են հրատարակուած, նոցա համեմատութիւնն էլ նշանակեցինք լուսանցքներում: Մեր ներկայ հրատարակութեան նպատակն էր նպաստել նոր համեմատութիւնների, յաւելուածների և յայտնութիւնների հրատարակութեան, որպէս զի նոցանով ճոխանայ մեր առաջարկած շատ համեստ և չափաւոր պաշարը Թլկուրանցու անքան հետաքրքիր տաղերի ուսումնասիրութեան: Մեզ համար այժմէն իսկ պարզ է, որ մեր առաջարկած տաղերի խմբագրութեան մէջ էլ պակասութիւն կայ. զորօրինակ՝ հէնց առաջին երգը «Քէնանյ բահար, այլւի բահար», որ արտագրուած է 1547 թուի ձեռագրից. մեզ այնպէս է երևում, որ այդ երգը, որ լի է կրկնութիւններով, իսկապէս 2—3 երգերից է բաղկացած. դժուարանում ենք այժմ մեր եզրակացութիւնն անել, քանի որ համեմատութեան բաւական նիւթ չկայ մեր ձեռքի տակ: Այդպիսի մի երգ էր, օրինակ, «Արևնման շողշող կրտա», որ հրատարակուած է Մանանայի և Հայերգի մէջ, և մենք համեմատութեան ժամանակ եր'յուռի բաժանեցինք՝ երգչի անուան երկու

անգամ կրկնուած լինելու պատճառով, և վստահ
ենք, որ մեր ձեռագրերի միջից այդպէս էլ կ'երևի
մի օր: Մեր հրատարակութեան մէջ չմտան այն եր-
կու տաղերը, որոնց մասին վերևն չիշել ենք. նո-
ցանից մէկը թուրքերէն է, և միւսը հայերէն և
թուրքերէն. երկուսն էլ գտնուած են մեր սեփական
ղրչեայ տաղարանի մէջ *):

Յովհաննէս Թլկուրանցու երգերի բարբառն ար-
ժանի է առանձին ուսումնասիրութեան. նորա թէ
օտար բառերի և թէ հայերէն սովորական և ան-
սովոր բառերի ու դարձուածների համեմատական
ուսումնասիրութիւնը մենք մտադիր ենք հրատարա-
կել իբրև առանձին գործ Հայոց միջնագարեան բար-
բառների հետազօտութեան մէջ:

*) Չամչեանի ասելով Թլկուրանցին ունի և մի ոտանա-
ւոր մեկնութիւն Մենդոց գրքի, որ ինքնուրոյն գործ չէ, այլ
փոխադրութիւն: Տ. Պատմ. Հայոց Գ. 508.

Գէնայ բահար, այլ՛ւի ¹ բահար.
 Այլ՛ւի կուտան սիրոյ խարար.
 Ծով ծով աչեր ու լուս քնար.
 Ունքն կեռ էր ² քան զկամար,
 Ճակատդ է լուս և լուսքնար ³,
 Բոլոր լուսին ⁴, շամս ու դամար.
 Վարսերդ ոսկի թելէ ⁵ քաշած,
 Վերայ մարմնոյդ եկեալ հաւար ⁶:
 Երեսդ ի վառ ⁷ է ծիրանի,
 Վարդ, ուէհան ու նուենուֆար ⁸.
 Ծոցդ է բաղչայ վարդով ի լի.
 Մարդրիտ ատմունքդ ի շարէ շար ⁹,
 Քո ձայնդ անուշ քաղցր եղանակ ¹⁰
 Բերնէդ ի վայր թափուի ¹¹ ջուհար.
 Այդ քո պատկերդ ¹² է լուսեղէն,
 Այլ արեգակն լուս չի տար.
 Մարմինդ քո ճոխ ¹³ բուսեր չինար.
 Ու ճօշ կուտայ ¹⁴ քան զուռ դալար.
 Այդ անյատակ ծովուդ նման
 Քերխա ի մէջն դարդ արար ¹⁵.
 Հանցեղ նետով զիս խոցեցիր,
 Որ այլ չունիմ բժշկարար.
 Է գեղեցիկ կերպիւ սուրաթ,
 Որ է ստեղծուած նաչի ու նիգար:

Նշտարենի ծառ ես ծաղկեալ ¹⁶.

Պտուղ կուտաս մուշկ ու ամպար ¹⁷.

Բեհեզ հագեր ես ծիրանի,

Ծալքերդ ամէն մարգարտաշար ¹⁸.

Քաղաք խաթայ Չինու-մաչին

Ու Բուրսայու բերած պաշար.

Այդ ճանապարհդ, որ կու քայլես,

Բուսեր շուշան ու նունուֆար ¹⁹:

Կարմունջ կապեալ ես ապիկի ²⁰

Եւ գետ գինի ուրախարար.

Ով որ խմէ ի քեզանէ ²¹,

Ուրախանայ սրտովն յօժար:

Արի՛ եկ իջնունք ի բաղչենին ²²

Ու բլբուլին անենք նադար.

Որ ի քաֆուր վարդի սիրոյն

Ի շուռ կուգայ քան զխելազար ²³:

Գարնանային ամիսն երբ գայ,

Հաւսար ծաղկի չոր և գալար.

Գետերդ ²⁴ յորդոր գնացք առնուն

Ի լեռներուն թափին ի վայր:

Մարդ որ սիրոյ կուհանգիպի

Նա քան զկրակ կուլինի վառ.

Այլ ոչ աղօթք ի միտ ²⁵ կուգայ,

Ոչ յայսմաւուր կարգայ ու ճառ:

Ջրթունքդ շող է լուսեղէն,

Պրունկնէդ ²⁶ ի վայր թափի ճուհար ²⁷.

Ով որ մեղաց ճաշակն առնու,

Այլ Աստուծոյ չի տար խաբար.
Սէրն զԱդամ դրախտէն հանեց ²⁸.
Յերկիր ձգեց, արար շիւար.
Եւ զնա մատնեաց սատանայի
Որ չարչարեաց ամ վեց հազար.
Սէթայ որդիքն խառնակեցան,
Որ ճղնաւորքն էին յօժար.
Զփող և ծնծղեակն ²⁹ լսեցին,
Ամէնքն եկին լեռնէն ի վայր:
Կինն զՅովհաննէսն գլխատեց
Հերովդիայ պղծոյն համար,
Որ վառեալ էր ցանկութեամբ,
Փութով տարաւ զկամքն ի կատար:
Սէրն հանէ մարդն ի խելաց,
Որ այլ ըսկի ³⁰ չկայ խաբար.
Իմաստութիւնն խափանի
Եւ հանց ³¹ դառնայ քան զգիւահար:
Կինն քաղցրիկ զրուց ունի
Խայթաւ ի հետ առնէ դալար ³².
Յանկարծ զթիւնքն ի մարդ թափէ,
Որպէս զակնատ բռնէ անճար ³³:
Յունքն քաղէ ³⁴, զաչքն դեղէ,
Խենէշանայ քան զՔելիար ³⁵,
Միշտ զպռունկն ծռմուէ ³⁶,
Զմարդիկ կուձգէ ի քարն ի վայր.
Իո՛ւ ստեղծեր զկինն ի կողէն ³⁷
Վասն Ադամայ սիրոյն համար

Թէ աճեցէք և բազմացէք
Եւ շրջեցէք լերին և՛ի քարք.
Նեռ այն սիրովն բորբոքին
Այս հողածին մարդիքս չար,
Որ հանապազ կու պռունկին,
Երթան ի կեր որդանցն յօժար:
Թուլկուրանցին գքեզ կ'աղաչէ,
Թէ կնոջ սիրոյն մի տիրանար
Որ չզրկիք յանձառ լուսոյն,
Այլ յԱստուծոյ ջլինի քեզ ճար:

Ծան. Այս երգը հանած է մի ձեռագիր տաղարանից 1647 թուին գրած: Նոյնը հրատարակուած է Մանանայի մէջ 1876, եր. 269. նշանաւոր պարբերութիւնները սոքա են՝ 1. ձեռ. օլտի. 2. Ման. Ունքն է կեռեր. 3. Ման. լուսնկար. 4. Ման. լուսնոյ. 5. ձեռ. ոսկով թերով. 6. Մ. վերայ անձինդ եղեր հաւսար. 7. Մ. երեսրդ վառ. 8. Մ. Նօնօփար. 9. Մ. ատամունքդ շարէ-շար. 10. Մ. քաղցրեղունակ. 11. Մ. թափի. 12. Մ. մատունքն. 13. Մ. անձնդ ճօղ. 14. Մ. կուձօձկուտաս. 15. Մ. զարւէզար. հետևեալ չորս տողն Ման. մէջ չկայ. 16. Մ. ծաղկեր. 17. Մ. մուշք ու ամբար. 18 Մ. ծամերդ ամեն են ոսկելար. 19 Մ. Նունուփար. 20 Մ. կապած ես ապակի. 21. ձեռ. ի սեղանէ. 22. Մ. Ար'եկ իջցուք ի մեր բաղչայն. 23. Մ. գեղ գիւահար. 24. Մ. ջրեր. 25. Մ. ի յաչք. 26. Մ. պռկէն. 27. Մ. ջաւհար. 28. Մ. եհան 29. Մ. զփողն ու զճնծղակն 30. Մ. իսկի. 31. Մ. հէնց. 32 Մ. քան զօձ քայլէ և՛ առնէ գալար. 33. զթոյնն թափէ յանկարծակի, զմարդ զէտ ակնաս բռնէ անձար. 34 Մ. Զունքն ծարրէ. 35. էնցեղ լինի քան զԲեյիար. 36 Մ. ծամուտ. 37. Մ. այս Տ տողը պակաս է:

Բ. ՎԱՍՆ ՍԻՐՈՅ

Արև նման շողշող կրտաս¹,
Յորժամ² սիրով գաչերդ յածես,
Թէ զիս³ յիշես, թէ չիշես,
Ես կուսիրեմ սրտովս զքեզ:
Դու գվէմերն խորտակես,
Դու զլերունքն հալ⁴ հանես.
Զով դու սիրես, նադար առնես⁵,
Անանց կրակով գանձնիկն այրես:
Դուն օրինակ ես աղէկնուն⁶,
Այլ մայր չէր բերեր քան զքեզ⁷.
Սպիտակ ճակատ, թուխ թուխ⁸ աչեր,
Լուծֆ ու քարամով լուս երես:
Լար շրթներովդ վարդ թափես⁹,
Ճօճան¹⁰ վզովդ բերդեր քակես.
Ամէն անձամբ ես գեղեցիկ,
Քեզ նմանակ միայն դու ես¹¹:
Ծոցդ է դրախտ անմահուծեան,
Անմահական պտղով դրախտ¹².
Դուն օրինակ ես աղէկնուն¹³,
Զքեզ սիրէ Աստուած և մարդ:
Հաբեղանւոյն ես որողայլթ,
Քահանայից ակնակուռ դարդ¹⁴.
Զմիակեցին խելքն տանիս,
Որ կացեր է զօրն անարատ:
Չկայ ի քեզ մագ մի դալատ¹⁵.

Յոյրը ¹⁶ անձամբդ սուրբ անարատ.
Ես կուզրեմ զիս քեզ մատաղ,
Ու քեզ ծառայ ու քեզ զէքաթ ¹⁷:
Բացէն ասեմ՝ ճարակ չկայ ¹⁸.
Մահու մեղաց ներքեւ եմ ես.
Հայիմ ի քեզ, հայիմ ի նա,
Որ ի հողոյ ստեղծեր զքեզ ¹⁹:
Խե Յովհաննէս Թուլկուրանցի,
Զօրն ի բուն ընդ այլ ²⁰ կ'ասես.
Զմարդն ի կրակ կուձգես,
Դառնաս, լնուս ջուր, ւ'անցունես ²¹:

Ծ ա ն օ թ . . Այս երգը հրատարակուեցաւ 1876-ին Մանանայի մէջ. 1883-ին Հայերգի մէջ լոյս տեսաւ սորա մի ուրիշ օրինակը, որ իսկապէս երկու մասից է բաղկացած, ինչպէս երևում է երգչի անուան կրկնութիւնից երկրորդի մէջ: Այս օրինակը Մանանային համեմատ է. տարբերութիւնները Հայերգից հետեւեալներն են՝ ¹. Հյ. շողշողէն ես. ². Հյ. քանի. ³. Հյ. սէր. ⁴. Հյ. ի հալ. ⁵. Հյ. Ով դու սիրով նստ արար ես. ⁶. Հյ. աղեղան. ⁷. Հյ. որ մայրն չէ բերեր զէտ քեզ. ⁸. Հյ. ու սև. ⁹. Հյ. շար շրթունքովդ վարդ կութափես. ¹⁰. Հյ. ճոխճան. ¹¹. Հյ. Քաւ էլ թէ քեզ նան դու ես. ¹². Հյ անմահական պտղով իլի. ¹³. Հյ. դու աննման ես մէջ աղէկնուն. ¹⁴. Հյ. քահանայից ալատ ու զարդ. ¹⁵. Հյ. Զէրա չունես իսկի դալադ, չկայ ի քեզ մազ մի արատ. ¹⁶. Հյ. չիք. ¹⁷. Հյ. զաքաթ. ¹⁸. Հյ. բաց ինչ անեմ՝ ճարակ չկայ. ¹⁹. այս 3 տողը Մանանայի մէջ այսպէս է — «մեղաց ներքեւ եմ, հայիմ ի քեզ, հայիմ ի նա, որ ի հողոյ այդքան չքնաղ ստեղծեր է զքեզ.» ²⁰. ընդալ. ²¹. Հլ. դուն ազնւոջ ունայն ես: Հայերգի մէջ 17-ից յետոյ կայ երեք տող ևս, որ կապ չունի ամբողջի հետ. այդ տողերն են՝ «Ըուշան, ռահան ու մանուշակ ու նուսօֆար ու սերկելիլ, նուռն ու նարինջ ու կարմիր վարդ:»

Գ. ՏԱՂ ՍԻՐՈՅ

Ասի՛ սիրէ՛ դիս, ծով աչեր.

Նա ասաց՝ պահեմ՝ դաչս ի վերան.

Նիստ, որ հայիմ լերեսդ ի վայր,

Հերիք կացիր, ինձ լերևան:

Թէ շատ թէ քիչ ի յետ ձդեմ.

Միթէ անցնի հուրս ի խափան.

Նա սէր ի սիրտս ի ներս կ'երթայ,

Ես կուճնամ մեղաց միայն:

Բերեմ մեղաց զահն ի մտիս,

Ու գդժոխոց հուրն անվախճան.

Միթէ ազատ եմ այս կրակէս,

Որ անվախճան ինձ վառեցան:

Խե Յովհաննէ՛ս Թուլկուրանցի,

Սրտի մտօք զականջդ բաց.

Ու աստէն արա՛ քեզ ճար շուտով,

Որով անդէն առնուս պակ:

Դ.

Լոյս երեսացդ է խիստ փափուկ
Քաղաք Խուժան ու Չինմաչին,
Թէ տեսնու զվարսդ ի Հնդստան,
Ընդ որ երթաս յետդ կոչեն.
Հանգոյն ալլովդ տեսիլ զմրուխտ
Տպազիոն ակն ու ջուհար
Ինձ անկասկած ի դէմ ելաւ
Զունչս քաղեցաւ
Չթողիր իս համբերութիւն
Քանի տեսնեմ կու ռարոափիւմ
Սիրտս ի փորիկս կ'անցնու կրծիցս
Ինձ մեղադիր չէր կուլիւնիք:
Հարիւր տարւոյ հաբեղանին
Որ ճերմակն է դարձեց գեղին
Կտրէ զկօրտիկ պատարագին
Ու զքեզ ուզէ առջև խաչին:
Դու դեղ ես ուրախութեան,
Որ զքեզ տանին ի պաղչանին,
Զճամդ ու զվարսերդ ի վայր թողուս,
Ծոցդ բանաս ՚ի մէջ պաղչին:
Ով զքեզ սիրէ, ո՞նց մեռանի,
Կամ երեսուին դառնայ գեղին.
Պարծանք ու վնշ քո ծնողին,
Փնռք ու պատիւ քո Արարչին:

Ո՞նց կարէ զքեզ դովել
Խե Յովհաննէս Թուլկուրանցին.
Քեզ վայել է ծառայ խպտի,
Բուլղար, Չարքազ, Հոռոմ, Լատին:

Հայերգ եր. 62.

Ե. ՍԻՐՈՎ, ՄԻ՝ ՍՊԱՆԱՆԵՐ.

Դու գարնանային վարդ ու բուրաստան,
Աչերդ է ծովեր խուճար ու մէստան.
Քո ծոցդ է ծաղկոց, մրգոց անդաստան.
Դու ինձ լեր դատաւոր, արան դատաստան.

Սիրով մի սպանաներ
Ճէլլէտ էֆէնտի.

Սիասաթ ունիս քան զօրաւոր քաջ,
Հրեղէն ես, հողեղէն թէ մարմնաւոր քաջ.
Հիւանդ եմ ես. ողջանամ, երբ նստիս ինձ յաջ.
Է վիզ շողկտակ և այտեր կանանչ,
Թող դու մնաս քան զնշտար կանանչ.

Սիրով մի սպանաներ
Ճէլլէտ էֆէնտի:

Սիրուն չղիմացաւ նախահայրն Ադամ.
Վանց սիրու ելաւ. Եդեմ դրախտէն հան.
ԶԴաւթալ գործքն լիշեմ ու ի զուռ կամ դողամ

ԶՍողոմոնի սուգն ես ալ ի հետ լամ
ԶՎարհատ Ձիրինին խապարն ես ո՞նց տամ.

Սիրով մի սպանաներ
Ճէլլէտ էֆէնտի.

Սէրն կուտանի դամօթն երեսէն
Ի հարեղայէն և ի վարդապետէն.
Երէց սարկաւազ կուձգէ ի կարգէն
Տանի զխելքն ի գլխուն, դամօթ երեսէն.
Անէ մալամաթ, հանէ արևէն.

Սիրով մի սպանաներ
Ճէլլէտ էֆէնտի:

Է՛ մեղր ու կարագ և կեղևած նուշ,
Քեզ ծուռ նայողին յաչքն հազար փուշ.
Է՛ սէլվի ջինար և սպիտակ թուշ
Ունիս կամար ունքեր զերթ աղեղան կուշ.

Սիրով մի սպանաներ
Ճէլլէտ էֆէնտի:

Երեսդ է արև ճակատդ է զոհրա.
Կլափդ է խնձոր, ծծերդ է շամամ,
Զինչ դրախտն է Եդեմ ամէն ծոցդ քո կան,
Երբ շաքարն է մօտս ի Մրսրր ինձ ինչ կայ.

Սիրով մի սպանաներ
Ճէլլէտ էֆէնտի.

Պագ մի յերեսէդ կ'ստէ զխորատան,
Զհապաշ ու զԵմէն տիլու հնդուստան.

Երկու վարսդ է դին Չինի և Խուժան
Պուլղար, Ստամպոլ է Ջէհրի եագդան.

Սիրով մի սպանաներ
Ճէլլէտ էֆէնտի:

Չեռագիր տաղարան 1623 թուի:

Զ. ՏԱՂ ԳԱՐՆԱՆ.

Ահա եղև պայծառ դարուն.

Փաղկեալ այգիքն ¹ ու պաղչանին,

Գաշտք ու լերինք ² դարդարեցան,

Յարօտ ³ հանին զխիլանին:

Գունդքն ⁴ ծաղկին ու հետ ⁵ կապին,

Անուշանայ հովն ու քամին:

Չագերն ⁶ ձայն ածեն յայգին ⁷,

Քաղցր կուգայ ձայն պիւլպիւլին:

Կուժանձրանայ շուքն ծառին.

Յորդոր գնայ ջուրն ի յառջին,

Չթևն բերէր բոլոր վզին,

Սիրով խմէր զանուշ գինին:

Այն վարդենուն ⁸ գէմ չկայ գին,

Որ այն խնդումն հանդիպին,

Քաւել դրախտն անմահութեան ⁹,

Յորում եղաւ մարդն առաջին:

Թէ չէր մահուն օրն ու դժոխքն ¹⁰
Ու կամ սարսափ ¹¹ դատաւտտունին,
Նա այս աղէկ էր զինչ ասաց
Խե ¹² Յովհաննէս Թլկուրանցին:

Ձեռ. տաղարան 1695 թ. Հայերգ եր. 46.

^{1.} Հյ. ծաղկանց ազգին. ^{2.} Հյ. դաշտ, աղբերունք. ^{3.} Հյ. արօտ. ^{4.} Հյ. գոյնքն. ^{5.} Հյ. չետ. ^{6.} Հյ. ձայներ. ^{7.} ձեռ. չիք. ^{8.} Հյ. վարդին. ^{9.} ձեռ. անմահութիւն. ^{10.} Հյ. դժոխ. ^{11.} կամ գոսարսափ. ^{12.} ձեռ. իսկ:

Է.

Ես զձեզ տեսայ սիրով նստած
Արևնման արեգական.
Ջինչ որ բաղչայ, որ կայ ի ներս
Վարդ ու շուշան պայծառ ծաղկունք:
Աչուեր ունիք զինչ ծովերուք ¹,
Յունքեր ունիք զինչ թուխ ամպունք ².
Զողման կլափ ³ ու լար շրթունք ⁴
Ու մարգարտէշար ատամունք:
Թէ վարդապետն զձեզ տեսնու ⁵,
Մոռնայ զուսուժն ու շատ գրունք ⁶.
Ամէն անձամբն ի դող ելնու,
Անցնի ամառն ու ձմեռնունք:

Ձեզ ինչ դադար ես դիմանամ,
Որ դուք հալէք, հանէք լերունք,
Սիրով քակէք բարձր բերդեր,
Ի՛նչ զիլ հանէք վէմք ու սարունք¹ :
Խա Յովհաննէս Թուլկուրանցի
Ջձեզ կուգովէ, ոսկի տփունք.
Վախեմ թէ հուրն այրէ գհոգիս,
Յերազ ուտեն անքուն որդունք:

Ձեռ. տաղարան 1647 թ. և Հայերգ եր. 47.

¹. Հյ. Աչեր ունիք գերդ գծովեր. ². ձեռ. ապունք. Հյ. ամպեր. ³. Հյ. շողայր կլափն. ⁴. ձեռ. լալ քրտունք. ⁵. Հյ. տեսնայ. ⁶. Հյ. գիտունք. ⁷. Հյ. ափունք:

Ը.

Աչերդ է թուխ ու պէտ.
Դու խօրօտիկ ես.
Քաֆուր վարդի նման
Անուշ հոտիկ ես.
Դու փնջած ժանուշակ,
Վարդի ծաղիկ¹ ես
Նորելուկի նման²
Կանանչ ուռիկ ես:
Դու սպիտակ ու կարմիր

Հոտեղ³ խնձոր ես.

Անուշ հոտովդ դու

Ջիս արբուցեր ես.

Դու մեղրով շաղաղուած .

Նուշ ու շաքար ես.

Բիբի լուսին պայծառ.

Արեգակն ես⁴ :

Դու հալած ու թափած

Ոսկի արծաթ ես.

Ղուճաշ ես խաղինի,

Քանի գովեմ զքեզ :

Քո սէրն ի յիս գիպաւ,

Ստոյգ կ'այրիմ ես.

Արի⁵ ինձ դեղ արան,

Իմ ճարն դու ես :

Կտրեր քուն յաչերուս.

Դուն ֆարաղաթ ես⁶ .

Քո սէր զիս մոմ արար

Դու ինձ պողպատ ու կայծքար⁷ ես :

Դու գիշեր և ցերեկ

Մէջ իմ սրտին ես.

Անմահ ու անգրող

Ջհոգիս հաներ ես :

Դու ինձ սիրելի

Ու ինձ բարեկամ ես.

Չարկամն զայդ չէր աներ

Ջինջ որ դուն կ'անես.

Անթուր ⁸ և՛անդանակ.
Զարիւնս հեղեր ես:
Գնաց իմաստութիւնս.
Զմիտքս տարեր ես.
Ես եմ ափ մի հողէ,
Գուն հրեղէն ես.
Քանի՛ զիմ այրած
Սիրտս այրունես.
Յորտեղ որ կունստիմ
Զիս կրմոռնամ ես.
Միթէ՞ զիս դեղեցիք
Կամ թէ կախանդ ես.
Զքո՞ ծով ծով աչերդ
Գեղով լցեր ես.
Ունքերդ կամարակապ
Ի վեր քաշեր ես.
Դու ես կանանչ աղբիւր,
Ծովու նման ես:
Ատամունքդ մարգարիտ,
Զաքարբերան ես,
Աշխարհս ¹⁰ խօրօտիկ,
Գէմ դու մէնակ ջնս.
Աստուորս շատ իկե,
Ի՛այլ տի գայ քանց քեզ.
Ասա՛ զբանս Յովհաննէս
Է՛ր կուխնայես.
Գու սուրբ Կարապետի

Ճորտն ու ծառան ես:
Սուրբ Կարապետ,
Չատ կուխնդրեմ զքեզ,
Ջասողքս և զլսողքս
Ի չարէն փրկես:

Մանանայ եր. 276. և Հայերգ եր. 73.

¹. Հյ. վարդ ու ծաղիկ. ². Հյ. Գարին էլուկ նման. ³.
Հյ. խատիճ. ⁴. Հյ. կթուռի պտրի լուսին զէտ արեգակ ես. ⁵. Հյ.
արեկ. ⁶. Հյ. Փարեաթ. ⁷. Հյ. քար. ⁸. Հյ. անսուր. ⁹. Հյ. զայդ
քո. ¹⁰. Հյ. յաշխարհս:

Թ. ՏԱՂ ՎԱՍՆ ԱՐԲԵՑՈՒԹԵԱՆ

Քեզ հոգևոր խրատ մի է ¹,
Անպիտան անձն իմ, լսէ.
Ջերդ պտղաբեր ծառ ի յարմատ
Ա՛ռ ի քո սիրտդ պատրուսէ ²:
Թէ սէր ունիս հետ Աստուծոյ,
Ի ու զպինին ու բողն ատէ.
Գինին է մայր ամէն մեղաց,
Ջոր ամենայն գիրք վկայէ:
Գինին է շնութեան օղնական.
Սողոմական ախտն շարժէ.
Գինին սպանումն զրգուէ.

Թող թէ հոգւոյն քանի՛ չար է:
Կինիախումն³ մաղրսկաթ
Քան զգիւահար ու այլ չար է.
Իսաուց մի գլուխ ի վայր բերէ,
Զկէս մի ցաւօք վիրաւորէ⁴.
Ու հետ փնչայ քան զգայլ գաղան⁶,
Զկշտանալու զչափն չգիտէ.
Պեղծ ու մարմինն⁷ սերմանէ.
Զաղտն⁸ ու զչարիքն շատցնէ:
Փսիւէ գերեան, ի վերայ դնէ,
Զունն գայ, զբերանն լիգէ,
Նա հանց գիտէ թէ իւր կինն է,
Եկեայ⁵ զբերանն կուսրբէ:
Ընդ⁹ ճամբու լանքն քալէ,
Կէշ հեծկլտայ¹⁰ և ծռկտէ.
Զբաղուկն աստի լ'անտի ձգէ.
Ով հանդիպի, նա հարկանէ:
Բարձր պատեր ի վեր հանէ.
Յառջևն կանանչ դաշտ ցուցանէ.
Յանկէց ի վայր զլիսիվարէ,
Ի յարևուն շուտ մի հանէ¹¹:
Պօղոս առ մեզ կուհրամայէ,
Թ'արբեցութիւնն խիստ չար է¹².
Ով զարբենալն հալալ ասէ,
Զերդ շուն ի տէրն կուհասէ:
Կինին մարդոյ ամօթ բերէ.
Եւ ի լեզու չար արկանէ.

ԽԼ Յովհաննէս Թուրկուրանցի,
Աղուոր պահէ զմիտք ի վերայ.
Մարդասէրն է Աստուածասէր.
Եղբայրատեացն է սատանայ:

Ձեռ. տաղարան 1695 թ.

ԺԱ. Ի ՎԵՐԱՅ ՄԱՀՈՒԱՆ

Քանի՛ դատիս ի հետ մեղաց,
Է՛ անզգամ մարդ կատաղած.
Զայնչափ չարիք, որ գործեցիր,
Հերիք արա՛, դարձիր մեղաց:
Ի յԱդամայ մինչև այսօր
Զունչ կենդանի զոք չէ թողած.
Գիտեմ չլսես խրատու գրոց,
Մեղաւորաց թ'ինչ կայ պահած:
Ով որ ունի բերդ ու քաղաք,
Գարդաս ունի ոսկւով ծեփած,
Յետոյ եթող զամէնն անտէր,
Ներքև հողուն է նա պառկած:
Ով որ խմէր զանուշ գինին,
Զինքն բտէր քան զխոզ ուռած,
Տեսայ գնա, խիստ ատելի
Չանուշահոտ զէջ մի դարձած:

Ով որ հեծնուր ձի բարձրավիղ,
Ու թուր քաշէր ամէն դեհաց,
Տեսայ զնա խիստ փոշիման,
Երկու փայտի մէջ էր պառկած:
Վատ աղջկունք, կին գեղեցիկ,
Որ ծամն ու վարսն են յօրինած,
Նոքա ունին պայծառ հանդերձ,
Զետ արեգակն են բոլորած,
Ճօճեն լ'ոլոր առնեն կամաց,
Լինին ամէն մարդոյ սիրած,
Ի մահու օրն են ատելի,
Քէշ ու զազիր են տեսողաց:
Քրիստոս նստի յաթու փառաց,
Հատուցանէ վարձ սիրողաց,
Արդարոցն տայ պսակ,
Ի'ապաշխարող մեղաւորաց:
Է՛ Յովհաննէս Թուլկուրանցի,
Սրտի մտօք գականջդ բաց,
Աստէն արա՛ քեզ ճար շուտով,
Անդէն առնուո պսակ փառաց:

ՓԲ.

Է՛ մահ, քանի՛ զքեզ լիշեմ,
Կուգողամ և կուսարսափիմ.
Չկայ քան զքեզ լեղի,
Ի՛ ամենայն լեղույն ¹ լեղի ես:
Լեղի՛, Լ՛ ամենայն լեղույ,
Միթէ՛ դու ի քեզ նման ես,
Դժոխք քան զքեզ լեղի,
Եւ յետոյ զայն ալ դու բերես:
Սողոմոն լիշեաց զքեզ,
Եւ ասաց՝ եղևկ վնյ եմ ես.
Նախատեաց զիմաստութիւնն,
Ինքն ի յինքն ասաց՝ փո՛ւ քեզ ².
Ի՞նչ շահ է իմաստութիւնս,
Քան զտգէտ աղքատ մեռայ ես.
Անմեղ եկայ ի յաշխարհս,
Եւ մեղօք երթամ սևերես:
Սողոմոն արքայն ասաց՝
Մի՛ ասեր թ՛արքայ եմ ես ³,
Ունիմ շատ դրամ ⁴, շատ գանձ,
Զատ դարպաս ու ոսկի ի ներս:
Ի գուր խռովեալ գանձես,
Ոչ գիտես ⁵ ում ժողովես.
Զաշխարհս ես ի գիրկդ առեր,

Քեզ ի խոր դժոխք կու փորես⁶ :
Ի մահ, դու⁷ քէն ունիս.
Ի՛նչամայ որդին կուհանես.
Կամ մեղաց հարուած ես դու,
Ի մահու պտղէն ծնեալ ես:
ԶԲովսէս մարգարէն չասես,
Ի՛նչ Գաւթայ իսկի չամացես⁸.
ԶԱբրահամ հայրն տանիս,
ԶԻսահակ ի հողն աճուես.
Տրդատ յաթուոյն ձգես,
ԶԿոստանդին ի յաչք չբերես.
Թէ կանգնէր հազար հեծել
Եւ ժողովք, իսկի չամացես:
Թէ հազեր է վեց⁹ զրեհ,
Կետ նետես¹⁰ ւ՛ր թափ անցընես.
Տանիս զնա ի բանտ ածես,
Դէմ դռանն քար մի ձգես.
Արծիւ ես, յերագ թռչիս,
Լայնաձիգ զթևդ տարածես,
Զինչ յաշխարհս հզօր մանուկ,
Ի թևիդ ծայրն ծրարես:
Հաղար երանի՛ նորա,
Զոր բարի գործով գտանես,
Հեղեղ բոցեղէն տարեր,
Զով ի մէջ մեղացն ըմբռնես:
Յովհաննէս Թուլկուրանցի,
Զուր կ'ասես¹¹, զայլ ոք իւրատես,

Եօթանասուն տարի լցեր ¹²,
Ի մեղաց մէջն կացեր ես ¹³:

Ձեռ. տաղարան 1647 թ. Բազմալէպ 1859 թ. և
Հայերգ եր. 135.

1. Հյ. լեղու. 2. Բազմ. թուի քեզ, Հյ. թուլ 'ի քեզ. 3. Հյ. միմիայն արքայ եմ ես. 4. Բզմ. և Հյ. դրախտ. 5. Հյ. զայն չգիտեմ. 6. ձեռ. փորձես. 7. Բզմ. թէ դու. Հյ. միթէ. 8. Բզմ. չի վախես. Հյ. չի վահես. 9. Հյ. հինգ ու վեց. 10. Հյ. գենես. 11. Բզմ. կաս. 12. Հյ. լցուեր. Բզմ. „զէտ անասուն տարին լցեր.“
13. Բզմ. Ու ի մահուն դուռն հասեալ ես:

ԺԳ.

Հայր մեղայ, ասեմ, չերկինս,
Թէպէտ և ես եմ անարժան.

Սուրբ արա՛ զիս ի մեղաց,
Անունդ սուրբ է յարաժամ:

Զարքայութիւնդ երևեցո՛,

Որ երկնչի՛մ գորն ու դողամ.

Միացո՛ զիս ի քո սէրդ,

Որ թէ տկար եմ, դորանամ:

Հաց հանապազ օրրստօրէ

Զիս կերակրէ, որ յագենամ,

Մի տար զիս ի փորձութիւն,

Ես Յորն չեմ, որ դիմանամ.

Այլ փրկեան գիտ ի չարէ,
Չարի ես ոչ կարեմ ժուժայ,
Զի քոյ է արքայութիւն
Արքայ Հոօր քեզ փառս ասմ:
Խե Յովհաննէս Թուրկուրանցի
Արքայութեանց կուցանկամ,
Զիտ ի մասինց արան արժան,
Ի դալտտեան քո միւս անգամ:

Հայերց եր. 172.

ԺԳ.

Թէ մահն չէրուկամ մեռնից,
Ես ունէի շատ բան հոգայու.
Չիշխեմ նոյ էր գիտ պիղծ դործոյ (-)
Վախեմ չդադրի աչս ի լալու:
Ես գքեզ տեսաչ նման լուսոյ,
Զէտ արեգակն որ նոր կ'ելնաւ.
Սիրտս այրեցաւ բարկ կրակոյ,
Ես մնայի իսկ կապելու:
Ես իմ սրտիս դանակ ածեմ,
Զաչքս ճաղի տամ հանելու.
Աստէնս չէնէ խիստ ամօթոյ,
Անդէն բաժին կեր գեհնու:

Եւ առնէ զցանկացողն որդի գեհենի,
Պարտական յայնմ ատենին, մեծ դատաստանին:
Բաբունիքն և իմաստունքն, որ խրատեն դմեզ,
Թէ հալալ կինն Ադամայ վնաս գործեաց մեզ,
Զօտարէն զինչ առնիցես, որ հրով այլի դքեզ,
Որ յԱստուծոյ և յապրանացն կողոպտէ զքեզ:
Լաւագոյն բան մի ասաց մեծն Սողոմոն
Եւ նորին բանին վկայ մեծն Սիմէօն,
Լաւ է բանճար խաղաղութեամբ
Քան զմիս մռտիկոն:

Ձեռ. տաղարան 1695 թ.

ԺԶ. ՏԱՂ ՔԱՋԻ ԼԻՊԱՐՏԻՆ

Է՛ Աստուծոյ անունն օրհնած ¹,
Որ անսկիզբն և անվախճան,
Որ ետուր ուժ Լիպարտին,
Եւ զօրացոյց զիւր սուրբ ծառայն:
Ձերթ սուրբ Սարգիս քաջն ի նման ²,
Ի սուրբ Թորոս, ի սուրբ Վարդան,
Քան զՄուշեղն յաղթող եղեալ ³,
Քան զՏրդատ Հայոց արքայն:

¹. Սիւ. „ՅԱստուծոյ անունն օրհնեալ“. բարևոք համարեցինք այսպիսի գնեի Յուշիկին համաձայն. ². Յուշ. ՚ի ս. Սարգիս քաջին նման. ³. Յուշ. բան զՄուշեղ այլ խիստ յաղթող.

Յորժամ հեծնուր զիւր ձին վազան,
Ի ձեռն առնոյր զըռուժ ճօճան,
Ստանէր ազղն Օտրանց,
Գողայր ամէն Օտարաստան:

Պատերազմին չկար խափան ⁴,
Ամէն տարի տասն և քսան.
Մինն զթումանն հալածէր ⁵,
Արիւն հանէր դէտ դետ Ջիհան ⁶:

Զերթ քացիով տիկ չարեօք լցան,
Փողովք առին ու ի Սիս էկան.

Մանչակ անուն չարեաց մառան
Մօտ ի քաղաքն եկան հասան:

Վաթսուն հազար մարդ միարտն
Զրեհն հազան ու ի ձին հեծան.

Չեռուին առին զըռուժ ճօճան,
Թուր և ասպար, ու կանդնեցան:

Վաթսուն հազար Օտրանց ելան,
Չայն ձգեցին ու կատղեցան.

Հարին զփող պատերազմին,
Զպուկն, ու գնաֆիրն զգաւ հարկան:

Այն անօրէն չար կենդանիքն,
Որ են նոքա Օտարական,

Եւ ի յահէն քաջ Ղիպարտին,
Զինչ դուռ դողան, առաջ չիզան:

Յայնժամ ասէ սուրբ թագաւորն.

⁴. Յուշ. պատերազմիւ չերկիր հափանցն. ⁵ Յուշ. ինքն
զթուման հալածանէր. ⁶. Յուշ. հաներ գետեր Ջիհան:

Քանչ Լիպարիտ, մեծ զօրական,
Հեծելս քեզ համար եկան

Մինչ յայս տեղիս, ուր կանգնեցան:

Վաթսուն հազար մարդ կոտորեցիր,

Որ զՄանչակին գոված տղան առիր.

Զթախտն թուլսանայ՝ բերիր,

Ձիանուն շատ թախտան:

Քաղցրիկ ետուր պատասխանի,

Թէ, ես քաղքիս չարին փոխան.

Բայց չէ պատեհ զրուց առնել,

Թէպէտ հասաւ ինձ օր մահուան:

Էջ և թամբեաց զիւր ձին վաղան,

Հազաւ զրեհ է՛ի վերայ ձօշան,

Ի գլուխն եգիր յաղթող վահան (՝)

Ի ձեռն էառ զրուսմ ձօձան:

Երկրպագեաց սուրբ աթուռոյն,

Եւ ծունր եգիր ամէն խորան,

Փառաւորեաց զՆրրորդութիւն,

Գովեաց զիշխանսն միաբան:

Հառչեաց, զօրդեակն համբուրեաց

Հանց, որ զհեծելն ի լաց եհան.

Ասաց. Արդեակ իմ Յովհաննէս,

Վասիլ, եղբայր իմ սիրական,

Փառաց տիկին դու Մանանայ,

Իշխանուհի արեւնրման,

Հայեաց պատկերս ի մանկութեան,

7. Այս բառն ուղղելի է թերևս „սուլթանայ“.

Որ տի մտնում ի հող տապան:

Քաջ Լիպարիտ ասաց ցարքայն.

Հայոց թագւոր աղնուական,

Հաստատ ու ախար սլահէ զկարմունճն,

Որ ես մտնում ի մէջն ու գամ:

Յիշեաց զՔրիստոս ահեղաձայն,

Կտրեց լ'անցաւ առ իւճնման.

Զհեծելն արար իախստական,

Ի՛ի հետն երթայր ընծանման:

Լաշկ արաւ դիզան դիզան

Հանց, որ արիւն զետեր ելան.

Նա թագաւորն չարացաւ,

Զհեծելն առին ու ի յետ դարձան:

Ստրանց հեծելն յառաջ եկին,

Զկարմունճն առին ու կանգնեցան.

Երբ Լիպարիտն ի յետ դարձաւ,

Նա չար հեծելն ի դէմ ելան:

Ըռումբ դրին ամէն դիմաց,

Զատ խոցեցին զյաղթող վկայն.

Հայէր ողորմ յաջ և ի ձախ,

Զոչ ոք գտաւ իւր օգնական:

Գազանադէմ անօրինին

Սրբոյն արեան ծարաւէին.

Զիւր սուրբ մարմինն ի հոն թողին,

Զգլուխն առին ի հետ տարին:

Երբոր հեծելքն ի յետ գնացին,

Ի՛ապա Սրսցիքն ի դուրս ելան.

Կրկին առին լ'ի Սիո եկան,
Քաղքին կրակ դարկին լ'ելան:
Չատ դարպասնին աւեր ածին,
Յեկեղեցեացն գանազան,
Երիցկանայք գերի տարան,
Սարկաւազունքն միարան:

Ճառագայթեց լոյսն ի վերան
Եւ սուրբ մարմնոյն ի հանդստեան.
Քաջ Լիպարիտ ու Սիր⁸ Յոհան
Քրիստոնէից համար մեռան:
Յորտեղ նստին հաց ու ի սեղան
Փողովք բազում և շատ իշխան
Յիշեն զնա սուրբ քահանայքն
Տան ողորմի, ասեն նմա:

Խե Յովհաննէս Թուլիուրանցին
Կարճ և ողորմ ասաց զայս բանս.
Գուք յիշեցէք զինքն հանասլազ,
Յառակ ասէք ի մի բերան:

Սիսուան եր. 226.

Մ ա ն օ թ ու թ ի ւ ն. Սիսուանում յիշուած չէ, թէ որ
թուականի ձեռագրից է հանած այդ երգը. միևնույն ժամանակ
այնտեղ եր. 227 մէջ է բերուած և մի այլ երգ Լիպարիտի վե-
րայ, որի մասին է. Ղևոնդ Ալիշանեան նույնպէս ստույգ ոչինչ
չգիտէ և նորա հեղինակին ծանօթ չլինելով, անուանում է

⁸. Սիսուան „ուսիր Յոհան“ բարձր գատեցինք փոխել
„ու Սիր Յոհան“ այսինքն „ և պարոն Յոհանը:“

„Ռամկաբան քերդող“ • այդ երգն այստեղ դնենք հետեմատու -
թեան համար.

Հոգևովդ սուրբ ես և անբիծ,
Զքեզ էր ընտրեալ Տէր ի յերկնից.
Պարծանք եղեր քրիստոնէից,
Ո՛վ մեճ հգօր քաջ Կիպարիտ:

Անձամբդ քաջ Սամփսոն էիր,
Յորժամ ճօշանդ հագնէիր,
Թուրքն ի չահէդ դառնայր մոխիր,
Ո՛վ մեճ հգօր քաջ Կիպարիտ:

Զանձն տուիր վասն օրինաց,
Մէն կանգնելով հազրի դիմաց.
Քո սուրի շատ սրտեր եբաց,
Ո՛վ մեճ հգօր քաջ Կիպարիտ:

Սապ երկրիս աստղ լուսատու.
Կանգնող էիր չամեն ժամու.
Թուրքն ի չահէդ սարսէր մահու,
Ո՛վ մեճ հգօր քաջ Կիպարիտ:

Այն չար պահիկն, որ քեզ հասաւ,
Քեզի օգնող չկայր բնաւ,
Անձնդ կարմիր գոչն ներկեցաւ,
Ո՛վ մեճ հգօր քաջ Կիպարիտ:

Զայն չարաչար մահն որ տեսար,
Կսկիծ է մօրն, որ դուն ծնար,
Աւաղ գքեզ բերան հազար,
Ո՛վ մեճ հգօր քաջ Կիպարիտ:

Ստոյ երկրին պաղչայ ու ծառ,
Գոչնք ի գունաց ծաղիկ որ կայր,
Հառաչանօք առին զիրար,
Ո՛վ մեճ հգօր քաջ Կիպարիտ:

Կաթուղիկոսք և վարդապետ,
Սուրբ քահանայք ամեն ի հետ
Չատ արտասուօք սրտերն երեւո,
Ո՛վ մեճ հզօր քաջ Կիպարիտ:
Հիւսիսային հողմն հիմիկ
Սարգիս յիշող եղաւ քեզիկ.
Դուն սիւն էիր ճայոց մեզիկ,
Ո՛վ մեճ հզօր քաջ Կիպարիտ:

Վերջին տնից երևում է, որ այս երկրորդ երգի հեղինակն է Սարգիս, որ թերևս ունեցել է և ճականունս „հիմիկ“: Եթէ Սիսուանի մէջ բերուած այս երգը համեմատելու լինինք Հ. Ղևոնդ Ալիշանեանի „Յուշիկք Հայրենեաց“ գրքի մէջ Բ. 510 (նոյն և Բազմավ, պ 1862 թ.) բերուած միևնոյն երգի այլ օրինակի հետ, կրտեսենք հետևեալ տարբերութիւնը. նախ որ միքանի տուն աւելի է Յուշիկի մէջ, այդ տներն են.

«Արեգական նման պաշտաւ
Երեսդ չոյս էր կամար,
Բարբդ բարի խօսքի շաքար,
Ո՛վ մեճ հզօր քաջ Կիպարիտ:
Ինութեամբ բարի դէմ աղքատաց,
Լսող էիր վարդապետաց,
Քո բանդ յամէն երկիր դոված,
Ո՛վ մեճ հզօր քաջ Կիպարիտ:
Դու հապարաց դէմ պահապան,
Սարգ չէ տեսեր քեզիկ նման.
Եյս հողածինքս, որ յերկրի կան,
Ո՛վ մեճ հզօր քաջ Կիպարիտ:

Երկրորդ որ վերջին տանը յաջորդում է, էրեք տուն ևս, որ խկապէս թլիւրանցու երգի ա. բ. գ. տներն են: Երրորդ որ Սարգիս անուան համար Հ. Ալիշանեանը լուսանցքի մէջ (Յուշ. Բ. 511) այսպիսի բացատրութիւն է տալիս. նա ասում է. „կու-

յիշէ Ս. Սարգսի համար շարականին ըսածն „Աւետաւոր Հայոց մեծաց դիմեալ ի մէջ երկրի ի հիւսիսոց հողմն հարաւոյ“ և այլն. մինչդեռ, եթէ „հիմիկ“ մականունն չէ, վերջին տան խօսքերից հետևում է, որ քաջ Լիպարիտին այժմ յիշող եղաւ Սարգիսը, որ իրեն հիւսիսային հողմ է համարում: Չորրորդ՝ Յուշիկի մէջ յիշուած „Թուրք“ անունն փոխարէն Սիսուանի մէջն է „Ուրթքն“, արդեօք ձեռագրի մէջ այդպէս վիճելու համար, թէ այլ պատճառով:



Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

Երես	Տող	Տպուած է	Փոխանակ
14	12 վեր.	դոհեր	զոհէր
14	13 „	ամէնաթանգադին	ամենաթանգադին
21	4 „	եղեր	եղիր
21	12 ներ.	թագաւոր	թագւոր
32	10 „	զկօրտիկ	զկօռտիկ
35	6 „	Զթեն	Ջթեն
42	3 վեր.	կարճաբան է.	կարճապանէ.
44	7 ներ.	Դարդաս	Դարպաս
53	8 „	զգաւ հարկան.	զգաւ հարկան.
